



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ի
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

„ 10 „ մարտի 2014թ.

N 49-Ա

Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով
կարգադրում եմ՝

1, „Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն,, պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով թատրոնի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով, հետևյալ կազմով.

- Մուշեղյան ՅՈՒ . - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
- Սաֆարյան Հ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ
- Ղազարյան Ն. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
- Նյութական պատասխանատու անձինք
 - Պողոսյան Գ. - հանձնող
 - Սանոսյան Գ. - ընդունող
 - Յուզբաշյան Ռ. - թատրոնի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Յու.Մուշեղյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև թատրոնի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

N. Քալանթար

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ